

Մաթեմատիկա
7-րդ դասարան

Մաթեմատիկան բոլոր գիտությունների թագուհին է:
Կ. Գառու

1. Հաշվել $77 \cdot \frac{999 \dots 9}{2016 \text{ հատ}}$ արտադրյալը:

2. Գտնել x -ը, եթե $x^2 = 2016 \cdot 2116 + 2500$:

3. Հայտնի է, որ a , b , c -ն 0-ից տարբեր կամայական թվեր են, այնպես որ $a^2(b + c - a) = b^2(c + a - b) = c^2(b + a - c)$: Ապացուցել, որ $a = b = c$:

4. ABC հավասարասրուն եռանկյան B գագաթի անկյունը հավասար է 30° -ի և $AB = BC = 6$ սմ: Տարված են ABC եռանկյան CD և BDC եռանկյան DE բարձրությունները: Գտնել BE -ի երկարությունը:

5. Ուղևորը ավտոբուսի պատուհանից նկատեց հակառակ ուղղությամբ գնացող ընկերոջը: 2 րոպե հետո նա իջավ ավտոբուսից և քայլեց ընկերոջ ետևից: Որքա՞ն ժամանակ հետո նա կհասնի ընկերոջը, եթե նրա արագությունը ավտոբուսի արագությունից 4 անգամ փոքր է, իսկ ընկերոջ արագությունից՝ 2 անգամ մեծ:

Անիս, ամսաթիվ _____

Անուն, ազգանուն, հայրանուն _____

Դպրոց _____

Դասարան _____